

AMICALE DES ARMÉNIENS DE TOULOUSE MIDI-PYRÉNÉES

Միդի-Պիրենե մարզի ու Թուլուզի Հայկական Ընկերակցություն

Հարգելի Հասմիկ Տոլմաջյան
Ֆրանսիայում Հայաստանի
արտակարգ և լիազոր դեսպան
Վիետի փող. N7
Փարիզ, 75017



05/05/18, Թուլուզ

Հարգելի Դեսպան,
Տիկին Հասմիկ Տոլմաջյան

Ձեզ ենք դիմում շատ վաղուց Ֆրանսիայի Միդի պիրենեում հաստատված Հայ ժողովրդի զավակների, ինչպես նաև վերջին 15-20 տարիներին Հայաստանից ահռելի չափերի հասնող արտագաղթի հետևանքով Հայկական համայնքը համալրած հազարավոր հայ տարագիրների անունից: Կարծում ենք, որ դուք տեղեկացված եք, որ այս տարածաշրջանում Հայ Համայնքը միասնական է և բազմիցս իր բողոքի ձայնն է բարձրացրել Հայաստանի Կոռուպցիայի իշխանությունների դեմ և իր ամբողջական աջակցությունը հայտնել ներկայումս Հայաստանում ընթացող Հայ ժողովրդի Համահայկական Շարժմանը:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետական Կուսակցության պատգամավորներն երբեք էլ ականջալուր չեն եղել հայ ժողովրդի խնդիրներին՝ պատճառ հանդիսանալով բնակչության 30 տոկոսից ավելի աղքատությանը, ահռելի ծավալների հասնող արտագաղթի, կոռուպցիայի, երկրի ֆինանսական արտահոսքի և պետական պարտքի առանց հիմնավորման կտրուկ աճի: Խնդիրներ, որոնք առաջացել են երկիրը մի քանի անձերի նպատակներին ծառայեցնելու պատճառով: Շարունակելով նույն ոգով՝ ՀՀԿ 56 պատգամավորներ մայիսի 1-ին անհիմն կերպով խոչընդոտեցին ժողովրդի կողմից առաջադրված վարչապետի ընտրությանը:

Այսպիսով, անհերքելի է, որ ՀՀԿ -ն չի արտահայտում ժողովրդի կամքը և անհապաղ պետք է հեռանա օրենսդիր և գործադիր մարմնիներին՝ տեղը զիջելով ժողովրդի առաջադրած թեկնածուին և իր ձևավորելիք իշխանությանը:



AMICALE DES ARMÉNIENS DE TOULOUSE MIDI-PYRÉNÉES

Միդի-Պիրենե մարզի ու Թուլուզի Հայկական Ընկերակցություն

Հարգելի Դեսպան, ընդունեք սա որպես Պահանջագիր, որի իրավունքը մենք ունենք: Պահանջում ենք Ձեզ օրենքի տառին համապատասխան մեր ձայնը լսելի դարձնել ՀՀԿ-ի ղեկավարությանը և պատգամավորներին: Այն է ՉԽՈԶԸՆԴՈՏԵԼ մայիսի 8-ին կայանալիք վարչապետի ընտրությանը և խաղաղ հեռանալ: Մեզ բավ է իրենց դավադիր գործելաձևը և մենք այլևս չենք հանդուրժում...

Հարգելի դեսպան, Հայաստանի և Արցախի առջև ծառայած խնդիրները լուծելու միակ ճանապարհը ժողովրդավարությունն է և միասնականությունը, մենք մերժում ենք բոլոր հակաժողովրդավարական ռեժիմներին: Օրինական իշխանության հաստատումը կնպաստի վերագտնելու վստահությունը դեպի ձևավորվելիք հայաստանյան քաղաքակիրթ իշխանությունները: Չի՛ լինելու այլևս 50-50 բանաձևը, չե՛ն լինելու այլևս հալածանքներ և կապիտալի բռնազավթում: Փոխարենը լինելու են ներդրումներ, աշխատատեղերի ստեղծում, Հայաստան-Սփյուռք-Արցախ ուս ուսի տված պետք է շենացնենք մեր Երկիրը, Մեր Տնտեսությունը և Բանակը...

Մենք շատ բան ենք կորցրել ու այլևս հապաղելու ժամանակ չունենք: Մենք կորցնելու Հայրենիք Չունենք, Մենք՝ Հայերս, Հայաստանում, թե Սփյուռքում, ամուր ու միասնական Կանգնած ենք և մենք ենք Տերը մեր Երկրի:

Կանխավ շնորհակալություն,

Հարգանքներով՝

Միդի-Պիրենե մարզի ու Թուլուզի հայկական ընկերակցություն